

Կ-289-20.09.2019,02.12.2019-SՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ԾԽԱՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՒՆԱՐԻՆԻՉՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նպատակներն են ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը:

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ծխախոտահումք` ծխախոտաբույսերից (նիկոտինանա) ստացված հումք, որն ամբողջական բույսն է կամ տերևները` բնական վիճակում, կամ չորացրած կամ ֆերմենտացված կամ առանձնացված մեջտեղի երակաթելով, կտրատած կամ ոչ, ձգմած կամ ջարդած, տեսակախառնած և խոնավացրած հատուկ բաղադրությամբ հեղուկով, ինչպես նաև ծխախոտաբույսի մնացուկները, պարունակում է նիկոտին և նախատեսված է ծխախոտային արտադրատեսակների պատրաստման կամ արտադրության համար.

2) ծխախոտային արտադրատեսակ` ցանկացած արտադրանք, որն ամբողջությամբ կամ մասամբ արտադրված է ծխախոտահումք հանդիսացող տերևից կամ պարունակում է ծխախոտահումք և արտադրված է այնպես, որ օգտագործվի ծխելու կամ ներծծելու կամ ծամելու կամ օրգանիզմ ներս շնչելու, ներառյալ

ծխախոտահումքի տաքացման եղանակով աերոզոլ արտադրելու միջոցով ներս շնչելու համար.

3) ծխախոտային արտադրատեսակի պատկանելիք՝ ծխախոտային արտադրատեսակի հետ կամ օգտագործման համար նախատեսված առարկա (սարք, ծխափող, ծխախոտի պահման առարկաներ, ծխախոտային արտադրատեսակի փաթեթման թուղթ, ծխախոտային արտադրատեսակի գլանաձև փաթեթման սարք).

4) խեժ՝ ծխախոտային արտադրատեսակի այրման հետևանքով առաջացած չմշակված բաղադրիչ.

5) նիկոտին՝ ծխախոտի արտադրատեսակի կամ ծխի մեջ պարունակվող նիկոտինի ալկալոիդներ.

6) ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչ՝ ծխախոտահումք չպարունակող, էլեկտրոնային (էլեկտրականություն կամ մարտկոցներ) եղանակով աշխատող արտադրանք (քարթիջով կամ տարայով) որի միջոցով նիկոտինի և պրոպիլենգլիկոլ կամ գլիցերին, առանձին դեպքերում նաև տարբեր համային կամ հոտային հավելումներ պարունակող լուծույթի գոլորշիացման արդյունքում առաջացած աերոզոլը փոխանցվում է օգտագործողի օրգանիզմ.

7) ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինչի օգտագործում՝ ծխախոտային արտադրատեսակը կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչը ծխելու կամ ներծծելու կամ ծամելու կամ օրգանիզմ ներս շնչելու կամ դուրս շնչելու ձևով կիրառում.

8) ծխախոտային արտադրատեսակի նմանակ՝ արտադրանք, որը շփոթեցման աստիճան արտաքնապես (գույնով և ձևով) նմանակում է ծխախոտային արտադրատեսակին.

9) ծխախոտային արդյունաբերություն՝ ծխախոտային արտադրատեսակներ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների արտադրողներ կամ ներմուծողներ կամ մեծածախ իրացնողներ.

10) շրջանառություն՝ ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների

ներմուծում կամ արտադրություն կամ պահպանում կամ իրացում կամ սպառում կամ ոչնչացում.

11) բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչներ՝ ծխախոտային արտադրատեսակին համարժեք, առանց ծխախոտահումքի օգտագործման, օրգանիզմ նիկոտին փոխանցող արտադրանք՝ ծխելուց կամ ծխել հրաժարվելու սինդրոմները (կամ հեռացման ախտանիշները) նվազեցնելու համար (նիկոտինային մաստակ, ենթալեզվային հաբեր, բերանում լուծվող հաբեր, ներշնչակ, որը նման է ծխափողի (մուշտուկ), սպեղանի).

12) ծամախոտ՝ ծխախոտային արտադրատեսակ, որը նախատեսված է ծամելու կամ ծծելու համար և պատրաստված է ծխախոտի տերևների մամլած կտորներից՝ ոչ ծխախոտային հումքի և այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա.

13) երկրորդային ծուխ՝ ծուխ, որն առկա է օդում, որտեղ ծխում են կամ նախկինում ծխել են, այդ թվում նաև ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինչի օգտագործման արդյունքում արտանետված նյութեր.

14) փակ տարածք՝ ցանկացած նյութից պատրաստված ծածկ ունեցող, շարժական կամ անշարժ պատերով ժամանակավոր կամ մշտական ցանկացած շինություն, որն ամբողջովին փակ է, բացառությամբ պատուհանների և դռան համար նախատեսված բացվածքների.

15) հանրային տարածք՝ հանրությանը մատչելի կոլեկտիվ օգտագործման վայր, անկախ դրա սեփականության ձևից.

16) ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների հովանավորություն՝ ցանկացած միջոցառմանը կամ իրադարձությանը կամ անձին ուղղված ցանկացած գործողություն, որը նպատակ ունի իրական կամ հնարավոր արդյունքով ուղղակի կամ անուղղակի խթանել ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների իրացումը (վաճառքը) կամ օգտագործումը.

17) ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների իրացման (վաճառքի) խթանում՝ ցանկացած գործողություն, որը չպարունակելով օրենքով սահմանված գովազդի տարրեր, անուղղակի կերպով

կարող է կամ ազդում է ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների իրացման ծավալների ավելացման վրա կամ անուղղակի կերպով ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների նկատմամբ ձևավորում է հետաքրքրություն:

Հոդված 2. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման, շրջանառության և օգտագործման իրավական կարգավորումը

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացումը, շրջանառությունը և օգտագործումը կարգավորվում է սույն օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով:

2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների ներմուծմանը, արտադրությանը, իրացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել, իրացվել և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման նպատակով արտադրվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտահանելու նպատակով արտադրվող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները կարող են արտադրվել արտահանվող երկրի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետությունում իրացվող ծխախոտային արտադրատեսակները ենթակա են համապատասխանության գնահատման:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, արտադրությունը, ներմուծումը, իրացումը, եթե ծխախոտային արտադրատեսակների ծխում նիկոտինի և խեժի պարունակությունը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած թույլատրելի սահմանը: Սույն պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների նկատմամբ:

5. Անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձիք կարող են Հայաստանի Հանրապետություն ներմուծել միայն Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները չգերազանցող ծխախոտային արտադրատեսակներ:

6. Արգելվում է ծամախոտի մեծածախ և մանրածախ վաճառքը Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 4. Առողջության վրա բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվության ապահովման մասով ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջները

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան, ընդ որում, ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր տուփ պարտադիր պետք է պարունակի ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստ, որը պետք է գետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա: Նախազգուշացման տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն ծխախոտային արտադրանքի մեծածախ ու մանրածախ

առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) 2 առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը: Ծխամորձի և ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթավածքների դեպքում՝ սույն տեխնիկական կանոնակարգով նախատեսված՝ ծխելու վնասակարության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը պետք է գետնեղվեն ներդիր թերթիկի վրա և զբաղեցնեն դրա մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը:

2. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների՝ մարդու առողջության վրա օգտագործման վնասակարության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորման և մակնշման Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների շրջանառությունն արգելվում է, բացառությամբ դրանց ոչնչացման դեպքերի: Ոչնչացումը իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների սպառողական տարաների վրա պատկերել ապրանքանիշի գույները, պատկերները, կորպորատիվ «լոգոները» և արտադրողին նույնականացնող այլ նշան (պատկեր) (այսուհետ՝ միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակներ): Միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակների տեխնիկական կանոնակարգը պարտադիր սահմանում է.

1) սպառողական տարայի վրա ապրանքանիշի անվան և արտադրանքի տեսակի անվանման մասին և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության նշումների առավելագույն երկարության միավորը.

2) սպառողական տարայի վրա սպառողին մոլորեցնող բառերի կամ գույների օգտագործման բացառմանն ուղղված կարգավորումները.

3) սպառողական փաթեթի վրա բառերի կամ նշանների տառատեսակին, չափին, դրանց տեղակայմանը ներկայացվող պահանջները,

4) ծխախոտային արտադրատեսակի անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ այլ պահանջներ:

Հոդված 5. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման արգելքները

1. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակները կամ դրանց պատկանելիքները կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակները վաճառել կամ որևէ այլ եղանակով իրացնել 18 տարին չլրացած անձանց: Եթե վաճառողի կամ որևէ այլ եղանակով իրացնողի կողմից կասկածներ են առաջացել գնորդի կամ որևէ այլ եղանակով ձեռքբերողի տարիքի վերաբերյալ, ապա նա իրավունք ունի պահանջելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ և դրա չներկայացման դեպքում չվաճառել կամ որևէ այլ եղանակով չիրացնել դրանք:

2. Արգելվում է 18 տարին չլրացած անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակները կամ դրանց պատկանելիքները կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակներ վաճառելը կամ որևէ այլ եղանակով իրացնելը:

3. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումն ինքնասպասարկմամբ (ինքնուրույնաբար ընտրելու և մինչև վճարման համար նախատեսված վայր հասցնելու եղանակով):

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումն ավտոմատների կամ մեխանիկական սարքավորումների միջոցներով:

5. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների, մանրածախ վաճառքը կամ որևէ այլ եղանակով մանրածախ իրացումն իրականացնելիս որևէ զեղչի կիրառումը:

6. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների`

1) վաճառքն` առանց օրենքով նախատեսված թույլտվության,

2) հրապարակային ցուցադրումը վաճառասրահներում և հանրային սննդի օբյեկտներում, բացառությամբ օդանավակայանների անմաքս առևտրի խանութների: Դրանց ցանկը` գների մասին նշումով վաճառողի կողմից տրամադրվում է չափահաս անձին` վերջինիս պահանջով: Ցանկը վաճառասրահում և հանրային սննդի օբյեկտներում չի փակցվում:

7. Արգելվում է`

1) ծխախոտային արտադրատեսակի մանրածախ վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը բաց տուփով կամ տուփում արտադրողի կողմից հավաստված արտադրանքի թվից ավելի կամ պակաս լինելու դեպքում,

2) սիգարետի հատով վաճառքը կամ որևէ այլ եղանակով հատով իրացումը,

3) ամբողջություն կազմող փաթեթում ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը սննդամթերքի կամ ոչ պարենային ապրանքների հետ,

8. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը`

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, առողջարանային կազմակերպությունների շենքերի ներսում և դրանց շենքերի

մուտքերից ուղիղ գծով մինչև 10 մետր հեռավորության վրա՝ բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների.

2) նախադպրոցական, հանրակրթական, նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատություններում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 10 մետր հեռավորության վրա.

3) մանկապատանեկան մարզական կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 10 մետր հեռավորության վրա.

4) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների ներսում.

5) թատերահամերգային, թանգարանային, գրադարանային կենտրոնների, կինոթատրոնների ներսում,

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հատկացված (նրանց կողմից զբաղեցված) տարածքների ներսում.

7) մարզական դահլիճների, համալիրների և մարզադաշտերի տարածքներում.

8) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում, բացառությամբ այն պատմության և մշակութային անշարժ հուշարձանների, որոնք համարվում են բնակելի տներ.

9) օդանավակայաններում (բացառությամբ անմաքս առևտրի խանութների):

Հոդված 6. Ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմանը ներկայացվող արգելքները և սահմանափակումները

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, օգտագործումն արգելվում է՝

1) հետևյալ տարածքներում՝

ա. բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 5 մետր հեռավորության վրա.

բ. նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատություններում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 5 մետր հեռավորության վրա.

գ. մանկապատանեկան մարզական կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 5 մետր հեռավորության վրա.

դ. համայնքի կողմից երեխաների համար նախատեսված խաղահրապարակների և խաղային պուրակների տարածքներում.

ե. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում, բացառությամբ այն պատմության և մշակութային անշարժ հուշարձանների, որոնք համարվում են բնակելի տներ.

զ. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղակայված շենքերում.

է. այն վայրերում, որտեղ ծխելն արգելված է՝ համաձայն հրդեհային անվտանգության կանոնների.

ը. հանրային սննդի օբյեկտներում, այդ թվում բացօթյա (ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ).

թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները (համալիրները), զբոսաշրջային տները).

2) այլ աշխատանքային փակ տարածքներում՝ անկախ սեփականության ձևից.

3) առևտրի կենտրոններում.

4) ցանկացած փակ հանրային այլ տարածքներում, ներառյալ ընդհանուր օգտագործման տարածքները, բացառությամբ՝

ա. օդանավակայանների, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը.

բ. հիվանդանոցային ձևով հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը.

5) գորամասերում և գինվորական հաստատություններում, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքների.

6) տրանսպորտում՝

ա. հասարակական՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում, թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում, օդային, վերգետնյա էլեկտրական տրանսպորտում, մետրոպոլիտենում, բացառությամբ ջրային և երկաթուղային տրանսպորտի, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը.

բ. վարորդի կողմից մասնավոր ավտոմոբիլային տրանսպորտային միջոցում ընթացքի ժամանակ:

7) հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ:

2. Ձերբակալվածների, կալանավորվածների, դատապարտյալների պահման վայրերում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և ծխախոտի ծխի բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելմանն ուղղված միջոցառումները իրականացվում են՝ Հայաստանի Հանրապետության

արդարադատության և առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինների սահմանված կարգին համապատասխան:

3. Ջորամասերում և զինվորական հաստատություններում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և ծխախոտային ծխի բացասական ազդեցության նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի սահմանած կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասում նշված հաստատություններում, մարմիններում, վայրերում և տարածքներում տեսանելի հատվածներում տվյալ հաստատության, մարմնի ղեկավարի կողմից պետք է տեղադրված լինեն ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:

Հոդված 7. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության արգելքն ու սահմանափակումները

1. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության բոլոր ձևերը արգելվում են:

2. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների նմուշների անվճար իրացումը:

3. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային

արտադրատեսակների նմանակների իրացման (վաճառքի) համար նախատեսված տարածքներում՝ դրանց (այդ թվում դրանց դատարկ կամ մեծացրած չափսերով տուփերի, բոքսերի, բլոկների, ապրանքային նշանը իմիտացնող գունային պաստառների) կամ դրանց ապրանքային նշանների կամ խորհրդանիշների՝ սպառողի համար տեսանելի վայրում տեղադրումը:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման (վաճառքի) խթանումը հետևյալ ձևերով՝

1) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում խոսքի կամ ձայնի կամ պատկերի միջոցով ներկայացնել ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) օգտագործումը.

2) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների հիշատակումը կամ դրանց ներառումը.

3) ծխախոտային արտադրատեսակների նմանակ հանդիսացող սննդամթերքի կամ խաղալիքների արտադրությունը կամ ներմուծումը կամ իրացումը.

4) Հայաստանի Հանրապետությունում երեխաների համար արտադրված և նախատեսված տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր, թատերական ներկայացումներ, հեռուստատեսության, ռադիո կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ դրանց օգտագործման պատկերումը:

5. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների հովանավորությունը:

6. Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսա կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր, հեռուստատեսության, ռադիո կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):

Հոդված 8. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններ են՝

1) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների և դրանց օգտագործման դեմ պայքարի առնվազն հնգամյա կտրվածքով ռազմավարության հաստատումը, որում սահմանվում են նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման հնգամյա ռազմավարական նպատակները և պետական կառավարման համակարգի մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում իրականացվելիք միջոցառումների, այդ թվում միջգերատեսչական ձևաչափով իրականացվելիք միջոցառումների նկարագրերը, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.

2) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգի հաստատումը.

3) Հայաստանի Հանրապետությունում ծխախոտային արտադրատեսակների՝ առավելագույն մանրածախ գնի մակնշման կարգի հաստատումը.

4) ծխախոտային արտադրատեսակների բաղադրության և դրանցից արտանետվող նյութերի փորձաքննության ու չափման կարգը, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման չափաքանակների սահմանումը:

5) ծխախոտային արդյունաբերության մեջ ներգրավված անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վնասակար ազդեցության մասին բնակչությանը իրազեկելու կարգը հաստատելը:

Հոդված 9. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման ոլորտում ֆիզիկական անձանց իրավունքները և ծխախոտային արդյունաբերողների պարտականությունները

1. Ֆիզիկական անձինք իրավունք ունեն իրազեկ լինել ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխի բացասական ազդեցության հետևանքների մասին:

2. Ծխախոտային արդյունաբերության մեջ ներգրավված անձինք պարտավոր են իրազեկել բնակչությանը ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վնասակար ազդեցության մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 10. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման, նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների նվազեցմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը

1. Ծխախոտային արտադրատեսակներ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործող յուրաքանչյուր անձիով դիմում է բժշկական հաստատություններ, տրամադրվում է նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների վերացմանն ուղղված անվճար բժշկական օգնություն և սպասարկում՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

2. Ծխախոտային արտադրատեսակի, ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի օգտագործման դադարեցման, նիկոտինից կախվածության բուժմանն

և ծխախոտայի արտադրատեսակի օգտագործման հետևանքների նվազեցմանն ուղղված բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված պացիենտի վարման գործելակարգի և այլ իրավական ակտերի համաձայն:

Հոդված 11. Սույն օրենքի խախտման դեպքում պատասխանատվությունը

1. Սույն օրենքով նախատեսված նորմերը խախտող իրավաբանական և ֆիզիկական անձինք ենթարկվում են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված մարմինների կողմից՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Հոդված 12. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ օրենքի՝

1) 4-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասով սահմանված ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից .

բ. 4-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից.

2) 5-րդ հոդվածի՝

ա. 6-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից.

բ. 8-րդ մասի 1-3 կետերով նախատեսված շենքերի մուտքերից ուղիղ գծով սահմանված հեռավորության վրա իրացման արգելքը սահմանող նորմերի, 5-րդ, 6-րդ, 8-րդ կետերի, որոնք ուժի մեջ են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո,

3) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

ա. «ը» ենթակետի որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 15-ից,

բ. «թ» ենթակետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

4) 7-րդ հոդվածի 3-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-72 օրենքը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով, 4-րդ հոդվածի 2-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա., բ. ենթակետերով, 6-րդ կետի ա. ենթակետով, 2-րդ և 3-րդ մասերով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվում են օրենքը ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտերի, որոնք ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեքամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԾԽԱՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՅՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակներն են ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը:

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ծխախոտահումք՝ ծխախոտաբույսերից (նիկոտինանա) ստացված հումք, որն ամբողջական բույսն է կամ տերևները՝ բնական վիճակում, կամ չորացրած կամ ֆերմենտացված կամ առանձնացված մեջտեղի երակաթելով, կտրատած կամ ոչ, ձգմած կամ ջարդած, տեսակախառնած և խոնավացրած հատուկ բաղադրությամբ հեղուկով, ինչպես նաև ծխախոտաբույսի մնացուկները, պարունակում է նիկոտին և նախատեսված է ծխախոտային արտադրատեսակների պատրաստման կամ արտադրության համար.

2) ծխախոտային արտադրատեսակ՝ ցանկացած արտադրանք, որն ամբողջությամբ կամ մասամբ արտադրված է ծխախոտահումք հանդիսացող տերևից կամ պարունակում է ծխախոտահումք և արտադրված է այնպես, որ օգտագործվի ծխելու կամ ներծծելու կամ ծամելու կամ օրգանիզմ ներս շնչելու, ներառյալ ծխախոտահումքի տաքացման եղանակով աերոզոլ արտադրելու միջոցով ներս շնչելու համար.

3) ծխախոտային արտադրատեսակի պատկանելիք՝ ծխախոտային արտադրատեսակի հետ կամ ~~համար~~ ~~օգտագործող~~ օգտագործման համար նախատեսված առարկա (սարք, ծխափող, ծխախոտի պահման առարկաներ, ծխախոտային արտադրատեսակի փաթեթման թուղթ, ծխախոտային արտադրատեսակի գլանաձև փաթեթման սարք).

4) խեժ՝ ծխախոտային արտադրատեսակի այրման հետևանքով առաջացած չմշակված բաղադրիչ.

5) նիկոտին՝ ծխախոտի արտադրատեսակի կամ ծխի մեջ պարունակվող նիկոտինի ալկալոիդներ.

Formatt
Highligh

Formatt
Highligh

Formatt
Highligh

Formatt
Highligh

Commer

Formatt
Red

Formatt

Formatt

Formatt

6) ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչ՝ ծխախոտահումք չպարունակող, էլեկտրոնային (էլեկտրականություն կամ մարտկոցներ) եղանակով աշխատող արտադրանք (քարթիջով կամ տարայով) որի միջոցով նիկոտինի և պրոպիլենգլիկոլ կամ գլիցերին, առանձին դեպքերում նաև տարբեր համային կամ հոտային հավելումներ պարունակող լուծույթի գոլորշիացման արդյունքում առաջացած աերոզոլը փոխանցվում է օգտագործողի օրգանիզմ:

7) ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի օգտագործում՝ ծխախոտային արտադրատեսակը կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչը ծխելու կամ ներծծելու կամ ծամելու կամ օրգանիզմ ներս շնչելու կամ դուրս շնչելու ձևով կիրառում:

8) ~~ծխախոտային արտադրատեսակի նմանակ՝ արտադրանք, որը շփոթեցման աստիճան արտաքնապես (գույնով և ձևով) նմանակում է ծխախոտային արտադրատեսակին արտաքնապես նմանեցված արտադրանք, որը և չի պարունակում ծխախոտահումք կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչներում օգտագործվող նիկոտին և պրոպիլենգլիկոլ կամ գլիցերին, ինչպես նաև համային կամ հոտային հավելումներ:~~

9) ծխախոտային արդյունաբերություն՝ ծխախոտային արտադրատեսակներ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների արտադրողներ կամ ներմուծողներ կամ մեծածախ իրացնողներ:


10) շրջանառություն՝ ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների ~~կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների~~ ներմուծում կամ արտադրություն կամ պահպանում կամ իրացում կամ սպառում կամ ոչնչացում:

11) բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչներ՝ ծխախոտային արտադրատեսակին համարժեք, առանց ծխախոտահումքի օգտագործման, օրգանիզմ նիկոտին փոխանցող արտադրանք՝ ծխելուց կամ ծխել հրաժարվելու սինդրոմները (կամ հեռացման ախտանիշները) նվազեցնելու համար (նիկոտինային մաստակ, ենթալեզվային հաբեր, բերանում լուծվող հաբեր, ներշնչակ, որը նման է ծխափողի (մուշտուկ), սպեղանի):

12) ծամախոտ՝ ~~չծխելու~~ ծխախոտային ~~արտադրանքի արտադրատեսակ, որը նախատեսված է~~ ծամելու կամ ծծելու համար ~~և պատրաստված է նախատեսված և ծխախոտի տերևների մամլած կտորներից պատրաստված՝ ոչ ծխախոտային հումքի և այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա:~~

13) երկրորդային ծուխ՝ ծուխ, որն առկա է օդում, որտեղ ծխում են կամ նախկինում ծխել են, այդ թվում նաև ~~ծուխ, որն արտաշնչվում է~~ ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի օգտագործման արդյունքում արտանետված նյութեր, ծողի կողմից:

14) փակ տարածք՝ ցանկացած նյութից պատրաստված ծածկ ունեցող, շարժական կամ անշարժ պատերով ժամանակավոր կամ մշտական ցանկացած շինություն, որն ամբողջովին փակ է, բացառությամբ պատուհանների և դռան համար նախատեսված բացվածքների:



~~15) կիսափակ տարածք՝ ցանկացած նյութից պատրաստված, երկու և ավելի անշարժ պատերով, ծածկի առկայությամբ ժամանակավոր կամ մշտական ցանկացած շինություն:~~

156) հանրային տարածք՝ հանրությանը մատչելի կոլեկտիվ օգտագործման վայր, անկախ դրա սեփականության ձևից:

167) ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների հովանավորություն՝ ցանկացած միջոցառմանը կամ իրադարձությանը կամ անձին ուղղված ցանկացած գործողություն, որը նպատակ ունի իրական կամ հնարավոր արդյունքով ուղղակի կամ անուղղակի խթանել ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների իրացումը (վաճառքը) կամ օգտագործումը:

188) ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների իրացման (վաճառքի) խթանում՝ ցանկացած գործողություն, որը չպարունակելով օրենքով սահմանված զովագրի տարրեր, անուղղակի կերպով կարող է կամ ազդում է ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների իրացման ծավալների ավելացման վրա կամ անուղղակի կերպով ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների նկատմամբ ձևավորում է հետաքրքրություն:

Հոդված 2. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների, բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների, իրացման, շրջանառության և օգտագործման իրավական կարգավորումը

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների, բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների, իրացումը, շրջանառությունը և օգտագործումը կարգավորվում է սույն օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով:

2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինչների ներմուծմանը, արտադրությանը, իրացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել, իրացվել և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման նպատակով արտադրվել **բացառապես** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինչները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտահանելու նպատակով արտադրվող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային

Formatted
Formatted
Armenian

Formatted

արտադրատեսակների փոխարինիչները կարող են արտադրվել արտահանվող երկրի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետությունում իրացվող ծխախոտային արտադրատեսակները ենթակա են համապատասխանության գնահատման:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, —արտադրությունը, ներմուծումը, իրացումը, եթե ծխախոտային արտադրատեսակների ծխում նիկոտինի և խեժի պարունակությունը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած թույլատրելի սահմանը: Սույն պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների նկատմամբ:

Formatted

5. Անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձիք կարող են Հայաստանի Հանրապետություն ներմուծել միայն Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները չգերազանցող ծխախոտային արտադրատեսակներ:

6. Արգելվում է ծամախոտի մեծածախ և մանրածախ վաճառքը Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 4. Առողջության վրա բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվության ապահովման մասով ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջները

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան, ընդ որում, ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր տուփ պարտադիր պետք է պարունակի ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային փոխարինիչների օգտագործման խեղդ վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստ, որը պետք է դառնա գետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա: Նախազգուշացման տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն ծխախոտային արտադրանքի մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) 2 առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 30 50 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը: Ծխամորձի և ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթավածքների դեպքում՝ սույն տեխնիկական կանոնակարգով նախատեսված՝ ծխելու վնասակարության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը պետք է գետեղվեն ներդիր թերթիկի վրա և զբաղեցնեն դրա մակերևույթի 350 տոկոսից ոչ պակաս մակերեսը:

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

Formatted

2. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների մարդու առողջության վրա օգտագործման վնասակարության վերաբերյալ ~~մարդու առողջության վրա բացասական ազդեցության մասին~~

Formatted

նախագգուչացման տեքստերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորման և մակնշման Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների շրջանառությունն արգելվում է, բացառությամբ դրանց ոչնչացման դեպքերի: Ոչնչացումը իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների սպառողական տարաների վրա պատկերել ապրանքանիշի գույները, պատկերները, կորպորատիվ «լոգոները» և արտադրողի ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը կամ լոգոն կամ արտադրողին նույնականացնող այլ նշան (պատկեր) (այսուհետ՝ միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակներ), ~~բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգով թույլատրվածների~~: Միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակների տեխնիկական կանոնակարգը պարտադիր սահմանում է.

1) սպառողական տարայի վրա ապրանքանիշի անվան և արտադրանքի տեսակի ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման մասին և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության նշումների առավելագույն երկարության միավորը.

2) սպառողական տարայի վրա սպառողին մոլորեցնող բառերի կամ գույների օգտագործման բացառմանն ուղղված կարգավորումները.

3) սպառողական փաթեթի վրա բառերի կամ նշանների տառատեսակին, չափին, դրանց տեղակայմանը ներկայացվող պահանջները,

4) ծխախոտային արտադրատեսակի անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ այլ պահանջներ:

Հոդված 5. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման արգելքները

1. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակները կամ դրանց պատկանելիքները կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակները վաճառել կամ որևէ այլ եղանակով իրացնել 18 տարին չլրացած անձանց: Եթե վաճառողի կամ որևէ այլ եղանակով իրացնողի կողմից կասկածներ են առաջացել գնորդի կամ որևէ այլ եղանակով ձեռքբերողի տարիքի վերաբերյալ, ապա նա իրավունք ունի պահանջելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ և դրա չներկայացման դեպքում չվաճառել կամ որևէ այլ եղանակով չիրացնել դրանք:

2. Արգելվում է 18 տարին չլրացած անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակները կամ դրանց պատկանելիքները կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակներ վաճառելը կամ որևէ այլ եղանակով իրացնելը:

Formatted Highlight

Formatted Highlight

Formatted Not High

Formatted Highlight

Formatted Highlight

Formatted Highlight

Formatted

3. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումն ինքնասպասարկմամբ (ինքնուրույնաբար ընտրելու և մինչև վճարման համար նախատեսված վայր հասցնելու եղանակով):

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումն ավտոմատների կամ մեխանիկական սարքավորումների միջոցներով:

5. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակներ փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների, մանրածախ վաճառքը կամ որևէ այլ եղանակով մանրածախ իրացումն իրականացնելիս որևէ զեղչի կիրառումը:

6. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների ~~կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների՝~~

1) վաճառքն՝ առանց օրենքով նախատեսված թույլտվության,

2) հրապարակային ցուցադրումը վաճառասրահներում, և հանրային սննդի օբյեկտներում, բացառությամբ օդանավակայանների անմաքս առևտրի խանութների: Formatted
Դրանց ցանկը՝ գների մասին նշումով վաճառողի կողմից տրամադրվում է չափահաս անձին՝ վերջինիս պահանջով: Ցանկը վաճառասրահում, և հանրային սննդի օբյեկտներում չի փակցվում: Formatted

7. Արգելվում է՝

1) ծխախոտային արտադրատեսակի մանրածախ վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը բաց տուփով կամ տուփում արտադրողի կողմից հավաստված արտադրանքի թվից ավելի կամ պակաս լինելու դեպքում,

2) սիգարետի հատով վաճառքը կամ որևէ այլ եղանակով հատով իրացումը,

3) ամբողջություն կազմող փաթեթում ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը սննդամթերքի կամ ոչ պարենային ապրանքների հետ,

8. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքը կամ որևէ այլ եղանակով իրացումը՝

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, առողջարանային կազմակերպությունների շենքերի ներսում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով ~~ոչ պակաս, քան մինչև~~ 10 մետր հեռավորության վրա՝ բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների.

Formatted

2) նախադպրոցական, հանրակրթական, նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատություններում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով ~~մինչև~~ ~~ոչ պակաս, քան~~ 10 մետր հեռավորության վրա.

Formatted

3) մանկապատանեկան մարզական կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով ~~մինչև~~ ~~ոչ պակաս, քան~~ 10 մետր հեռավորության վրա.

Formatted

4) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների ներսում.

5) թատերահամերգային, թանգարանային, գրադարանային կենտրոնների, կինոթատրոնների ներսում,

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հատկացված (նրանց կողմից զբաղեցված) տարածքների ներսում.

7) մարզական դահլիճների, համալիրների և մարզադաշտերի տարածքներում.

8) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում, բացառությամբ այն պատմության և մշակութային անշարժ հուշարձանների, որոնք համարվում են բնակելի տներ.

9) օդանավակայաններում (բացառությամբ անմաքս առևտրի խանութների):

Հոդված 6. Ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմանը ներկայացվող արգելքները և սահմանափակումները

1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, օգտագործումն արգելվում է՝

1) հետևյալ ~~փակ, կիսափակ և բաց հանրային~~ տարածքներում՝

ա. բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով ~~մինչև~~ 5 մետր հեռավորության վրա.

Formatted

բ. նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատություններում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով ~~մինչև~~ 5 մետր հեռավորության վրա.

Formatted

գ. մանկապատանեկան մարզական կազմակերպությունների շենքերում և դրանց շենքերի մուտքերից ուղիղ գծով մինչև 5 մետր հեռավորության վրա.

Formatted

դ. համայնքի կողմից երեխաների համար նախատեսված խաղահրապարակների և խաղային պուրակների տարածքներում.

ե. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում, բացառությամբ այն պատմության և մշակութային անշարժ հուշարձանների, որոնք համարվում են բնակելի տներ.

զ. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղակայված շենքերում.

Formatted

է. այն վայրերում, որտեղ ծխելն արգելված է՝ համաձայն հրդեհային անվտանգության կանոնների.

ը. հանրային սննդի օբյեկտներում, այդ թվում, բազայա (ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ).

Formatted
Not High

Formatted
Not High

թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները (համալիրները), զբոսաշրջային տները).

2) այլ աշխատանքային փակ ~~կամ կիսափակ~~ տարածքներում՝ անկախ սեփականության ձևից.

Formatted
Red

3) առևտրի կենտրոններում.

4) ցանկացած փակ ~~կամ կիսափակ~~ հանրային այլ տարածքներում, ներառյալ ընդհանուր օգտագործման տարածքները, բացառությամբ՝

ա. օդանավակայանների, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը.

բ. հիվանդանոցային ձևով հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը.

5) զորամասերում և զինվորական հաստատություններում, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքների.

6) տրանսպորտում՝

ա. հասարակական՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում, թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում, օդային, վերգետնյա էլեկտրական

տրանսպորտում, մետրոպոլիտենում, բացառությամբ ջրային և երկաթուղային տրանսպորտի, որտեղ թույլատրվում է ունենալ օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:

բ. վարորդի կողմից մասնավոր ավտոմոբիլային տրանսպորտային միջոցում ընթացքի ժամանակ:

7) հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ:

2. Ձերբակալվածների, կալանավորվածների, դատապարտյալների պահման վայրերում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և ծխախոտի ծխի բացասական ազդեցության նվազեցմանն և կանխարգելմանն ուղղված միջոցառումները իրականացվում են՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության և առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինների սահմանված կարգին համապատասխան:

3. Ջորամասերում և գինվորական հաստատություններում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և ծխախոտային ծխի բացասական ազդեցության նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի սահմանած կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասում նշված հաստատություններում, մարմիններում, վայրերում և տարածքներում տեսանելի հատվածներում տվյալ հաստատության, մարմնի ղեկավարի կողմից պետք է տեղադրված լինեն ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներ, որոնց ներկայացվող պահանջները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:

Հոդված 7. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության արգելքն ու սահմանափակումները

1. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների, ~~ներառյալ~~ ~~դրանց~~ ~~օգտագործման~~ գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության բոլոր ձևերը արգելվում են:

2. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների նմուշների անվճար իրացումը:

3. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային

արտադրատեսակների նմանակների իրացման (վաճառքի) համար նախատեսված տարածքներում՝ դրանց (այդ թվում դրանց դատարկ կամ մեծացրած չափսերով տուփերի, բոքսերի, բլոկների, ապրանքային նշանը իմիտացնող գունային պաստառների) կամ դրանց ապրանքային նշանների կամ խորհրդանիշների՝ սպառողի համար տեսանելի վայրում տեղադրումը:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման (վաճառքի) խթանումը հետևյալ ձևերով՝

Formatted

1) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում խոսքի կամ ձայնի կամ պատկերի միջոցով ներկայացնել ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) ~~կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների~~ օգտագործումը.

2) այլ ապրանքների կամ աշխատանքների կամ ծառայությունների գովազդում ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների հիշատակումը կամ դրանց ներառումը.

3) ծխախոտային արտադրատեսակների ~~նմանակ~~ հանդիսացող սննդամթերքի կամ խաղալիքների արտադրությունը կամ ներմուծումը կամ իրացումը.

Formatted
Not High

4) Հայաստանի Հանրապետությունում երեխաների համար արտադրված ~~երեխաների համար~~ և նախատեսված տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր, թատերական ներկայացումներ, հեռուստատեսության, ռադիո կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ դրանց օգտագործման պատկերումը:

5. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների հովանավորությունը:

~~6. Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ դրանց օգտագործման պատկերումը թույլատրվում է բացառապես ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ սոցիալական գովազդներում կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների և դրանց օգտագործման դեմ պայքարին ուղղված տեղեկատվական միջոցառումների շրջանակում:~~

7.6. Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսա կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր, հեռուստատեսության, ռադիո կամ ինտերնետի միջոցով

Formatted

հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):

Հոդված 8. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններ են՝

1) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների և դրանց օգտագործման դեմ պայքարի առնվազն հնգամյա կտրվածքով ռազմավարության հաստատումը, որում սահմանվում են նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման հնգամյա ռազմավարական նպատակները և պետական կառավարման համակարգի մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում իրականացվելիք միջոցառումների, այդ թվում միջգերատեսչական ձևաչափով իրականացվելիք միջոցառումների նկարագրերը, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

2) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգի հաստատումը:

3) Հայաստանի Հանրապետությունում ծխախոտային արտադրատեսակների՝ առավելագույն մանրածախ գնի մակնշման կարգի հաստատումը:

4) ծխախոտային արտադրատեսակների բաղադրության և դրանցից արտանետվող նյութերի փորձաքննության ու չափման կարգը, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման չափաքանակների սահմանումը:

5) ծխախոտային արդյունաբերության մեջ ներգրավված անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վնասակար ազդեցության մասին բնակչությանը իրազեկելու կարգը հաստատելը:

Հոդված 9. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների բացասական ազդեցության նվազեցման և կանխարգելման ոլորտում ֆիզիկական անձանց իրավունքները և ծխախոտային արդյունաբերողների պարտականությունները

1. Ֆիզիկական անձինք իրավունք ունեն իրազեկ լինել ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխի բացասական ազդեցության հետևանքների մասին:

2. Ծխախոտային [արդյունաբերության մեջ ներգրավված անձինք արդյունաբերողները](#) պարտավոր են իրազեկել բնակչությանը ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների

վնասակար ազդեցության մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 10. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներիի օգտագործման, նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների նվազեցմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը

1. Ծխախոտային արտադրատեսակներ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործող յուրաքանչյուր անձի դեռահասներին— և ~~վերարտադրողական—տարիքի—կանանց,~~ ովքեր դիմում է են բժշկական հաստատություններ, տրամադրվում է նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների վերացմանն ուղղված անվճար բժշկական օգնություն և սպասարկում պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

2. Ծխախոտային արտադրատեսակի, ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի օգտագործման դադարեցման, նիկոտինից կախվածության բուժմանն և ծխախոտային արտադրատեսակի օգտագործման հետևանքների նվազեցմանն ուղղված բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված պացիենտի վարման գործելակարգի և այլ իրավական ակտերի համաձայն:

Հոդված 11. Սույն օրենքի խախտման դեպքում պատասխանատվությունը

1. Սույն օրենքով նախատեսված նորմերը խախտող իրավաբանական և ֆիզիկական անձինք ենթարկվում են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված մարմինների կողմից՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Հոդված 12. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ օրենքի՝

1) 4-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասով սահմանված ծխախոտային ~~արտադրատեսակների արտադրատեսակների~~ փոխարինիչների փաթեթավորմանը և և մականշմանը ներկայացվող պահանջների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից և ~~1-ին մասով սահմանված նախազգուշացման տեքստերի 50 տոկոսից ոչ պակաս լինելու նորմի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:~~

բ. 4-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից.

2) 5-րդ հոդվածի՝

ա. 6-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից.

բ. 8-րդ մասի 1-3 կետերով նախատեսված շենքերի մուտքերից ուղիղ գծով սահմանված հեռավորության վրա իրացման արգելքը սահմանող նորմերի, 5-րդ, 6-րդ, 8-րդ կետերի, որոնք ուժի մեջ են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո,

3) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

ա. «ը» ենթակետով ~~սահմանված փակ տարածքներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն արգելող նորմերի,~~ որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 15-ից,

Formatted

~~բ. «ը» ենթակետով սահմանված կիսափակ տարածքներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումն արգելող նորմերի, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի մայիսի 1-ից.~~

~~բ.գ. 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի. «թ» ենթակետի, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:~~ 0 թվականի մայիսի 1-ից.

Formatted

4) 7-րդ հոդվածի 3-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ձանաչել «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-72 օրենքը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով, 4-րդ հոդվածի 2-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա., բ. ենթակետերով, 6-րդ կետի ա. ենթակետով, 2-րդ, և 3-րդ և ~~4-րդ~~ մասերով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվում են օրենքը ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտերի, որոնք ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԾԽԱՒՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԿՈՂ ԿՆԱՍԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆՆԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-289-20.09.2019,02.12.2019-ՏՀ-011/1) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	ՀՀ կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 8-րդ կետ	<p>Հստակեցնել հոդված 1-ում և համապատասխանաբար ամբողջ նախագծում հստակեցնել «ծխախոտային արտադրատեսակի նմանակ հասկացությունը»:</p> <p>1-ին հոդվածի առաջին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«8) ծխախոտային արտադրատեսակի նմանակ՝ արտադրանք, որը շփոթեցման աստիճան արտաքնապես (զույնով և ձևով) նմանակում է ծխախոտային արտադրատեսակին.»:</p>	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 15-րդ կետ	«Կիսափակ տարածք» եզրույթը հանել հաշվի առնելով, որ նա այլևս չի կանոնակարգվում Նախագծով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նշված եզրույթը նախագծից հանվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 1-ին մաս	<p>Նկատի ունենալով, որ 2024 թվականից նախատեսվում է անցնել միօրինականացված փաթեթավորմանը՝ առջարկվում է նախագուշական տեքստերի մակերևույթի համար նախատեսված 50 տոկոսը փոփոխել և սահմանել ներկայիս գործող չափաքանակները՝ 30 տոկոս:</p> <p>4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«1. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան, ընդ որում, ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր տուփ պարտադիր պետք է պարունակի ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ հիմնական նախագուշակացման տեքստ, որը պետք է զետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ</p>	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

			նախագգուշացման տեքստը՝ մյուսի վրա: Նախագգուշացման տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն ծխախոտային արտադրանքի մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) 2 առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը: Ծխամորձի և ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթավածքների դեպքում՝ սույն տեխնիկական կանոնակարգով նախատեսված՝ ծխելու վնասակարության վերաբերյալ նախագգուշացման տեքստերը պետք է զետեղվեն ներդիր թերթիկի վրա և զբաղեցնեն դրա մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը:»:		
<< կառավարություն	5-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում ներառել հանրային սննդի օբյեկտներում հրապարակային ցուցադրության արգելքը հաշվի առնելով, որ Ազգային ժողովում քննարկումների արդյունքում հանվել է հանրային սննդի վայրերում ծխախոտի վաճառքի արգելքի դրույթը և առաջացել է անհրաժեշտություն կարգավորել հրապարակային ցուցադրությունը այդ վայրերում նույն պես: Կետը խմբագրել ավելացնելով «և հանրային սննդի օբյեկտներում» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	5-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետ	Նախագծով կանոնակարգել օդանավակայանների անմաքս խանութներում ծխախոտային արտադրատեսակների ցուցադրման ընձեռնման հնարավորությունը: Կետը խմբագրել ավելացնելով «բացառությամբ օդանավակայանների անմաքս առևտրի խանութների» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի ը) ենթակետ	Լրացնել «այդ թվում բացօթյա» բառով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	7-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասը հանել, սոցիալական գովազդի ներքո ծխախոտի թաքնված գովազդ չանելու պատճառաբանությամբ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Հոդվածները խմբագրել, նախատեսելով նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների վերացմանն ուղղված անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով պետական նպատակային ծրագրերի առկայության անհրաժեշտությունը: Ավելացնել «ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 3-րդ կետ	«համար օգտագործվող» բառերը փոխարինել «օգտագործման համար նախատեսված» բառերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	
<< կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 10-րդ կետ	Հանել «կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:	

	ՀՀ կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 12-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում սահմանված «ծամախոտ» հասկացությունը անհրաժեշտ է հստակեցնել տարընթերցումներից խուսափելու համար և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «12) ծամախոտ՝ ծխախոտային արտադրատեսակ, որը նախատեսված է ծամելու կամ ծծելու համար և պատրաստված է ծխախոտի տերևների մամլած կտորներից՝ ոչ ծխախոտային հումքի և այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա.»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	1-ին հոդվածի առաջին մասի 13-րդ կետ	Հստակեցնել «երկրորդային ծուխ» հասկացությունը տարընթերցումներից խուսափելու համար: 1-ին հոդվածի առաջին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «13) երկրորդային ծուխ՝ ծուխ, որն առկա է օդում, որտեղ ծխում են կամ նախկինում ծխել են, այդ թվում նաև ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչի օգտագործման արդյունքում արտանետված նյութեր.»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի վերնագիր	Նախագծի 2-րդ հոդվածը խմբագրել ներառելով բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների կարգավորումը: Հոդվածի վերնագրում և 1-ին մասում ավելացնել «բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածով առաջարկվող 47.15-րդ հոդվածի 1-ին մաս	«գովազդատուի» բառից հետո լրացնել «և գովազդակրի» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս	ՀՀ տարածքում մինչև 2024 թվականի հունվարի 1-ը զուգահեռաբար թույլատրվելու է ինչպես ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, այնպես էլ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշման համապատասխան ծխախոտային արտադրանքի ներմուծում, արտադրություն, իրացում: Այս համատեքստում Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված «բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանող» դրույթը, կարծում ենք անհրաժեշտ է վերանայել և հանել «բացառապես» բառը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների՝ մարդու առողջության վրա օգտագործման վնասակարության վերաբերյալ նախագուշացման տեքստերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից.»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասը անհրաժեշտ է հստակեցնել տարրընթերցումներից խուսափելու համար և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների սպառողական տարաների վրա պատկերել ապրանքանիշի գույները, պատկերները, կորպորատիվ «լոգոները» և արտադրողին նույնականացնող այլ նշան (պատկեր) (այսուհետ՝ միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակներ): Միատեսակ փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակների տեխնիկական կանոնակարգը պարտադիր սահմանում է: 1) սպառողական տարայի վրա ապրանքանիշի անվան և արտադրանքի տեսակի անվանման մասին և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության նշումների առավելագույն երկարության միավորը: 2) սպառողական տարայի վրա սպառողին մոլորեցնող բառերի կամ գույների օգտագործման բացառմանն ուղղված կարգավորումները: 3) սպառողական փաթեթի վրա բառերի կամ նշանների տառատեսակին, չափին, դրանց տեղակայմանը ներկայացվող պահանջները: 4) ծխախոտային արտադրատեսակի անվտանգության և առողջության:»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
18.	ՀՀ կառավարություն	5-րդ հոդվածի 6-րդ մաս	Նշված «կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների» բառերը հանել:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	5-րդ հոդվածի 8-րդ մասի 1)-ին, 2)-րդ և 3)-րդ ենթակետեր	«ոչ պակաս, քան» բառերը փոխարինել «մինչև» բառով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետ	Հանել «փակ, կիսափակ և բաց հանրային» բառերը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի ա), բ) և գ) ենթակետեր	«5 մետր» բառերից առաջ ավելացնել «մինչև» բառը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի գ) ենթակետ	Լրացնել «տեղակայված» բառով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի 2)-ին կետ և 4)-րդ, կետեր	Հանել «կամ կիսափակ» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

	<p>«Հ կառավարություն</p>	<p>7-րդ հոդվածի 1-ին մաս</p>	<p>Նախագծի 7-րդ հոդվածի վերնագրում խոսքը գնում է ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության արգելքի ու սահմանափակումների մասին, մինչդեռ նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում են նաև դրանց օգտագործման գովազդի բոլոր ձևերը: Այս առումով հիշյալ հոդվածի վերնագրի և հոդվածի բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթները: Հանել «ներառյալ դրանց օգտագործման» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նախագծի հոդված 7-ի վերնագիրն ու բովանդակությունը համապատասխանեցվել են միմյանց:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>«Հ կառավարություն</p>	<p>7-րդ հոդվածի 4-րդ մաս</p>	<p>Խմբագրել, համապատասխանեցնելով 4-րդ մասը իր կետերին: Լրացնել «կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների» բառերով: 4-րդ մասի 1)-ին կետից հանել «կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>«Հ կառավարություն</p>	<p>9-րդ հոդվածի 2-րդ մաս</p>	<p>«արդյունաբերողները» բառերը փոխարինել «արդյունաբերության մեջ ներգրավված անձինք» բառերով:</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>«Հ կառավարություն</p>	<p>10-րդ հոդվածի վերնագիր</p>	<p>Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «10. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման, նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների նվազեցմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը»:</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>«Հ կառավարություն</p>	<p>12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետ</p>	<p>Հանել «և 1-ին մասով սահմանված նախագուշացման տեսքերի 50 տոկոսից ոչ պակաս լինելու նորմի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից», հաշվի առնելով, որ այս կարգավորումը հանվել է Նախագծից:</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>«Հ կառավարություն</p>	<p>12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ</p>	<p>Միևնույն ժամանակ, կարևորելով առողջության պահպանման անհրաժեշտությունը և հանրային շահի գերակայությունը Նախագծով առաջարկվում է կանոնակարգել նաև «բացօթյա հանրային սննդի օբյեկտներում» ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը՝ սահմանելով օգտագործման միասնական արգելք՝ ընդ որում ուժի մեջ մտնելու ժամկետը նշված դրույթի սահմանելով 2022 թվականի մարտի 15-ը: 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի»</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

			ա. «ը» ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 15-ից, բ. «թ» ենթակետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:»:		
	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 3-րդ մաս	«և 4-րդ » բառերը հանել:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: